Հաստատվում եմ
Տնօրեն Լ. Միքայելյան

Digitally signed by MIKAYELYAN LUSINE
6503740131
Date: 2023.10.19 13:09:22 AMT

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.2 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՍԱՐԱՆ՝ 5բ

ԴԱՍՂԵԿ՝ Շուշան Իսրայելյան

ՈՒՍՏԱՐԻ 2023-2024

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Աշակերտների մոտ դաստիարակել սեր ուսման նկատմամբ, պարտաճանաչություն, ամրապնդել կարգապահությունը, բարձրացնել պատասխանատվության զգացումը: Հասնել նրան, որ ուշացումներ ու անհարգելի բացակայություններ չլինեն: Ապահովել աշակերտների ակտիվ մասնակցությունը դասարանական աշխատանքներին: Օգնել հետ մնացող աշակերտներին: Կազմակերպել ուսումնադաստիարակչական էքսկուրսիաներ, գրական ընթերցումներ:

2.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1 Հոգևոր դաստարակություն

Կարևորել կրոնի դերն ու նշանակությունը, եկեղեցու կարևորությունը համախմբման գործում: Անցկացնել զրույցներ Աստվածաշնչյան թեմաներով: Պահպանել քրիստոնեական սովորույթներն ու ավանդույթները, ծիսական արարողակարգերը:

2.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, ըմբռնելու հմտությունը: Անցկացնել զրույցներ «Գեղեցկությունը բարոյականություն է» թեմայով, որը աշակերտների մեջ սեր կարթնացնի դեպի գեղեցիկը և կբարձրացնի նրանց գեղագիտական ճաշակը:

2.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտներին սովորեցնել սիրել հայրենիքը, անաղարտ պահել մայրենի լեզուն: Ներկայացնել մեր հայրենիքի սահմանները տարբեր դարաշրջաններում, հայ ժողովրդի նվիրյալ հերոսներին, նրանց գաղափարները /Գարեգին Նժդեհ, Մոնթե Մելքոնյան /: Սերմանել սեր ու հարգանք հայրենիքի համար զոհված հերոսների նկատմամբ:

Զրուցել, թե ինչպես է արտահայտվում սերը հայրենիքի նկատմամբ, բացատրել, որ հայրենիքն սկսվում է մեր դասարանից, բակից, համայնքից:

Բացատրել, որ հայրենիքի պաշտպանությունը բոլորիս սուրբ պարտքն է, յուրաքանչյուրս պետք է լինենք զինվոր:

2.4 **Ֆիզիկական դաստիարակություն**

Աշակերտների մոտ ձևավորել առողջ ապրելու կուլտուրան :Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասաժամերին: Անցկացնել զրույցներ առողջ սնվելու, մարմնամարզությամբ զբաղվելու անհրաժեշտության մասին, զերծ մնալ վնասակար սովորություններից:

2.5 **Աշխատանքային դաստիարակություն**

Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն– այս խոսքերով պետք է սեր արթնացնել դեպի աշխատանքը: Կարևորել աշխատելու կարողությունը և ամրապնդել սերը աշխատանքի հանդեպ:

2.6 Բնապահպանական դաստիարակություն

Զրուցել բնության պահպանման անհրաժեշտության, աղտոտման բացասական հետևանքների մասին : Աճեցնել ծաղիկներ և խնամել դրանք, մաքուր պահել շրջակա միջավայրը:
Դաստիարակել սեր և հոգատարություն բնության նկատմամբ:

Անցկացնել զրույցներ բնության նշանակությունը և նրա գեղեցկությունը

թեմաներով:

2.7 Դպրոց-ընտանիք կապը

Ընտրել ծնողական կոմիտե: Ամրապնդել դպրոց-ուսուցիչ-ծնող կապը:

Անցկացնել ծնողական ժողովներ: Պարբերաբար կապ հաստատել ծնողների հետ, ներկայացնել

առաջադիմությանը և վարքին վերաբերող խնդիրները, համատեղ փորձել գտնել լուծումներ:

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Անցկացման օրը	*Դասղեկի անցկացրած միջոցառման /դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսաներ և այլն/ բովանդակություն*
սեպտեմբեր	1.Իմ դասարանը
սեպտեմբեր	2.Իմ առողջությունը իմ ձեռքերում է
սեպտեմբեր	3.Ես ունեմ երազանք
սեպտեմբեր	4. Մեր անկախ Հայաստանը
հոկտեմբեր	5.Իմ ուսուցիչ
հոկտեմբեր	6. ՀՀ խորհրդանիշները
հոկտեմբեր	7.Ոսկե աշուն
նոյեմբեր	8.Պահպանենք բնությունը
նոյեմբեր	9. Ընկերասիրություն
նոյեմբեր	10.Ազգային երգերի ունկդրում
նոյեմբեր	11.Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը
դեկտեմբեր	12. Երկրաշարժ և այլ բնական աղետներ
դեկտեմբեր	13.Տարվա ամենասիրելի եղանակը
դեկտեմբեր	14.Մեր վանքերն ու եկեղեցիները
դեկտեմբեր	15. Մոտենում է Ամանորը
հունվար	16.Արցախյան հերոսամարտերը
հունվար	17.Պատերազմ տեսած մանուկները

հունվար	18. Հայոց բանակը
փետրվար	19.Սպորտը ինձ համար
փետրվար	20.Սիրում եմ քեզ հայոց լեզու
փետրվար	21.Ինչ են սովորեցնում մեզ Հովհ. Թումանյանի հերոսները
փետրվար	22.Տանը ինչ գործեր եմ անում և ինչպես եմ օգնում ծնողներիս
մարտ	23.Մայրության և գեղեցկության տոն
մարտ	24.Բնությունը գարնանը զարթոնք է ապրում
մարտ	25.Մաքուր պահենք մեր շրջապատը
մարտ	26. Ինչ է ազնվությունը
ապրիլ	27.Խաղաղություն
ապրիլ	28.Իմ կարդացած գրքերը
ապրիլ	29.Եղիր առողջ ու առույգ
ապրիլ	30.Որտեղից է սկսվում հայրենիքը
մայիս	31.Էքսկուրսիա մոտակա եկեղեցի
մայիս	32.Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ
մայիս	33.Ինչ սովորեցի այս ուսումնական տարում
մայիս	34.Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝ *Էլմիրա Մովսիսյան*

անդամներ՝

1.Աննա Քոսակյան

2.Սուսան Հովհաննիսյան

3.Էլմիրա Անթառանյան

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Զրույցի համառոտ բովանդակությունը
2023թ.սեպտեմբեր	1.Ծանոթություն	Ծանոթացանք, ընտրեցինք ծնողկոմիտե և նախագահ: Խոստացան սեղմ ժամկետում ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքներ:
	2.Ծնողական կոմիտեի և նախագահի ընտրություն	
	3.Գրքերի վարձավճարների և գրենական պիտույքների վերաբերյալ քննարկում	
	4.Կարգապահական հարցեր	
	5.Ընթացիկ հարցեր	